10 [illegible]

15 [illegible]

5 [illegible]

10 [illegible]

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

## ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏՊԵԱԼ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

1836 — ՌՄՁԵ

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
## ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ինչպէս կը հաւատայ և կը խոստովանի
մեր Եկեղեցիս Հայոց։

Այժմ ռամկական ոճով շարադրեցաւ նորահասակ
մանկանց համար, որ հեշտ հասկընան։

Ի Դպրատունն Օրթագիւղի։

Ի Պատրիարգութեան կոստանդնուպօլսոյ
Տէռն Ստեփաննոսի ամենապատիւ և Սե-
հափառ Արքեպիսկոպոսի։

ՏՊԵԱԼ ՎԵՐՍՏԻՆ

1836 — ՌՄՁԵ

ՅՕՐԹԱԳԻՒՂ։

Ի Տպարանի երից որդւոց Պօղոսի արապեան ա-
պուչեխցւոյ։

281.6




Կամիս լինիլ դու քրիստո    նեայ ․
Ո՞ այս 'ի մտի քում հաւա    քեայ ։

Հարց. Դուն ի՞նչ ես.

Աստուծոյ շնորհօքն քրիստոնեայ եմ.

Ո՞րով եղեր ես քրիստոնեայ.

Սբ աւազանին ծննդեամբն, ուր մկրտեալ եմ՝ յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սբյ.

Կատարեալ քրիստոնեայն ո՞վ է.

Կատարեալ քրիստոնեայն այն է, որ Քի հրամանը կը կատարէ, սբ եկեղեցւոյ պատուիրանքը կը պահէ.

Քրիստոնէին նշանը ի՞նչ է.

Քրիստոնէին նշանը, մէյմը՝ երեսը խաչակնքելն է. և մէյմըն ալ՝ իր ընկերը սիրելն է.

Ինչպէ՞ս պէտք է խաչակնքել.

Այսպէս ըսելով. յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սբյ.



Քա

Քանի՞ բան պէտք է քրիստոնէին, որ փրկուած գտանայ՝ և արքայութիւն երթայ:

Չորս բան. հաւատք, յոյս, սէր, և բարի գործ:

Քանի՞ հարկաւոր բան կայ քրիստոնէին, որ անոնց պիտի հաւատայ:

Երկու. մէկը՝ սուրբ երրորդութեան խորհուրդը, թէ Աստուած մէկ է, և երեք անձն ունի. հայր և որդի և սուրբ հոգի: Եւ մէկալ՝ մարդեղութեան խորհուրդը՝ թէ որդին Աստուած աշխարհք եկաւ, մարմին առաւ, մեզ նման մարդ եղաւ. և իրեն չարչարանքովը և մեռնելովը՝ մեզի սատանային ձեռքէն ազատեց:

Ո՞ր բանք պիտի յուսանք:

Այս երկու բանիս. մէկը՝ թէ քանի կենդանի ենք, Աստուած իւր շնորքը մեզի կու տայ. և մէկալը՝ թէ երբ որ մեռանիմք, Աստուած իւր արքայութեան փառքը մեզի կու տայ:

Ո՞վ պիտի սիրենք:

Մէյմը Աստուած, և մէյմը մեր ընկերը:



Ինչ

Ի՞նչ բարեգործութիւն պէտք գործենք ։

Ա՛յն հրամանը կատարենք ․ որ եկեղեցւոյ պատուիրանքը տեղը տանինք ․ աղօթք ընենք ․ պաք պահենք ․ և ողորմութիւն տանք ․

Ա՛ծ ի՞նչ է ․

Ա՛մէն ստեղծուածներուն ստեղծօղն է ․ ինքն հիչ մէկէմը ստեղծուած չէ ․ երեք անձն և մի բնութիւն է ․ ամենաբարի է ․ ամենազօր է ․ ամենատես է ․ ո՛չ սկիզբն ունի, և ո՛չ վերջ ունի ․ յաւիտենական և անփոփոխելի է ․

Ա՛ծ ո՞ւր է ․

Ա՛ծ ամէն տեղ է ․

Հապա ի՞նչու երկինքն է կըսենք ։

Երկինքը՝ ամենէն բարձր և պատուաւոր տեղն է ․ հրեշտակները և ո՛րբ հոգիքը հոն են ․ և արքայութիւնը Ա՛ծ ոյն տեղը սահմաներէ ․ անոր համար Ա՛ծ յերկինս է կըսենք ․ զերէ Ա՛ծ ամէն տեղ է ․

Հայր Ա՛ծ է ․

Ա՛յո՛ Ա՛ծ է ․

Որդին ա՞ծ է։

Այո՛ ած է։

Հոգին ալ ա՞ծ է։

Այո՛ ած է։

Անանկ է նէ, երեք ած կը լինին։

Չեն ըլլար երեք ած, այլ մի ած է. զերէ երեք անձինքն մէկ ըզ մէկէ բաժանուած չեն. այլ մէկ բնութի, և մէկ ածութի ունին։

Կրնա՞ս մէկ օրինակ մը տալ ինծի, որ խելքս հասնի։

Արեգի օրինակ ըլլայ արևն. ահա՛ նախ ինքն արեգակն. երկրորդ՝ լոյսն. երրորդ՝ տաքութին. որ այս երեքս մի են. զերէ բաժանելու չեն։

Նաև, ակին ջուրն. ակէն վազած գետին ջուրն, և աւազանի մէջ լըցուած ջուրն. ուրիշ ուրիշ են, սակայն մէկ ըզ մէկէ բաժանուած չեն. երեքն մէկ ջուր են։

Կրնա՞ս ուրիշ պարզ օրինակ մը ևս տալ ինծի, որ աղէկ մը տեղեկանամ։

Ահա՛ տամ քեզ՝ մէկ հեշտ հասկընալու, և յայտնի օրինակ մի։

՚Նոյն այբ գիրը (ա), որ երեք ձեւով կամ սիւն ունի. ամէն մէկ սիւն՝ կատարեալ այբ է. մէկ ըզ մէկէ աւելի եւ պակաս զօրութիւն չունին. եւ երեք սիւնքն մէկ տեղ գալով՝ մէկ այբ կըսուի, եւ ոչ երեք այբ։

Այսպէս Հայր ած, Որդին ած, Հոգին սբ ած, երեք անձինք են, այլ երեք ած չեն, մէկ ած է. մէկ զօրութիւն եւ արարչութիւն ունին.

### Ինչո՞ւ կը խաչակնքեմք ըզմեզ.

Մէյմը այս է, թէ որովհետեւ սբ խաչն՝ քրի նշանն է. քրի նշանը մեր վըրայ ունենալով՝ յայտնի կը լինիմք թէ քրիստոնեայ եմք՝ եւ քրի ծառայ. եւ մէկալը՝ որ խաչակնքած ժամանակնիս՝ սբ երրորդուն անունը կը յիշեմք. եւ ասով սբ երրորդուն հաւատալնիս, եւ երկըրպագութիւն ընելնիս կիմացուի։

---

## Գլ. Բ.

### Հաւատոյ հանգանակը գիտե՞ս։

Այո գիտեմ. Հաւատամք 'ի մի ած' 'ի հայրն ամենակալ. եւ այլն։



Այս

Մեր հանգանակը քանի՞ մասունք կամ աստիճան ունի, և ո՞վ ըրաւ։

Տասն երկու աստիճան ունի, և մեր առաքեալները՝ Երուսաղէմ քաղաքը՝ մեր Սիոն վերնատունը սահմանեցին։

Ո՞րն է առաջին աստիճանն, և այն ո՞ր առաքեալ ըրաւ։

Առաջին աստիճանն է այս՝ Հաւատամք 'ի մի Աստուած՝ 'ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի։ Եւ զայս՝ պետրոս առաքեալը ըսաւ։

Մեկնէ որ իմանամ։

Այս կը հաւատամ՝ թէ մէկ է Աստուած. և այս մէկ Աստուածութեան առաջին անձն Հայր ամենակարողն է, որ երկինքը և երկիրս, և զամէն ինչ որ կայ նէ, իւր ամենակարողութեամբը յոչնչէ ստեղծեց։

Ո՞րն է երկրորդ աստիճանն, և ո՞ր առաքեալ ըսաւ։

Երկրորդ աստիճանն է այս։ Եւ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ։ Եւ այս ըսաւ Յովհաննէս աւետարանիչն։



Մեկ

Մեկնէ որ իմանամ.

Այս կը հաւատամ՝ թէ յս քս հօր այ որդի է. և ինչպէս՝ հայր ած ամենակալ է, երկնի և երկրի ստեղծօղ է. յս քս ալ՝ հօր այ պէս ամենակալ է, երկնի և երկրի արարիչ է.

Ո՞րն է երրորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ.

Երրորդ աստիճանն է այս. Մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սբոյ կուսէն հոգւովն սբով: Եւ այս ըսաւ յովհաննէս աւետարանչին եղբայրն՝ յակոբոս առաքեալն.

Մեկնէ որ իմանամ.

Այս կը հաւատամ՝ թէ յս քս ճշմարիտ ածըլ՝ մեզի փրկելու համար աշխարք եկաւ. հոգւոյն սբյ զօրութեմբ՝ սբ կոյս մարիամ ածածինէն ծնաւ. մեղքէն ՚ի զատ մարդկային բոլոր բնութիւը առաւ. հոգւով՝ մտօք՝ մարմնով՝ ճշմարիտ և կատարեալ մարդ եղաւ. ոչ ածութիւը ՚ի մարմին փոխուեցաւ, և ոչ մարմինը յածութի փոխուեցաւ.

Ո՞րն է չորրորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Չորրորդ աստիճանն է այս։ Չարչարեալ, խաչեալ, Թաղեալ։ Եւ այս ըսաւ անդրէաս առաքեալն։

Ինչ՞նէ որ կիմանամ։

Ես կը հաւատամ՝ թէ յ̃ս ք̃ս մեզի այնքան սիրեց, որ դժոխքին տանջանքէն՝ և սա̃նյի ձեռքէն մեզի ազատելու համար, հրեից ազգէն չարչարվեցաւ՝ պոնտացի պիղատոս դատաւորին իշխանութե̃ ժամանակը. և մ̃ր խաչափայտին վ̃ր մեռաւ։ Այս ժամանակը ք̃ի հոգին ու մարմինը մէկ ըզ մէկէ բաժանվեցան. լաքին ք̃ի ա̃ծութիւնը ոչ հոգիէն բաժանվեցաւ, և ոչ մարմինէն։

Օրինակ մը տուր որ խելքս հասնի։

Քեզ օրինակ ըլլայ աղեղը. այսինքն՝ օխին եայը. թէ ասոր թելին մէջ տեղէն կըտրես, այն թելն՝ մէկ ըզ մէկէ կը բաժնըվի. լաքին աղեղը երկու կտոր թելէն ալ չի բաժանվիր. Ահա թելը կը նշանակէ ք̃ի մարմինը և հոգին, որ մահուան ժամանակը բաժանվեցան. աղեղը կը



նշա

նշանակէ քո՛ անունը, որ ոչ հօրէն բաժնըվեցաւ, և ոչ մարմինէն.

Ո՞րն է հինգերորդ աստիճանն, և ո՞վ բառն.

Հինգերորդ աստիճանն է այս. Իջ 'ի դժոխս. Եւ այս բառ Թովմաս առաքեալն.

Մեկնէ որ իմանի.

Ես կը հաւատամ, թէ յս̃ քս̃ երբ որ խաչին վերայ մեռաւ, մարմինը նորափոր գերեզմանի մէջ թաղվեցաւ, և հոգւովը դժոխքը իջաւ. դժոխքը քակեց. և այն զընտանին մէջը եղեալ ս̃բ նահապետներուն, և մարգարէներուն, և արդարներուն հոգիքը ազատեց. Ուստի անոնք որ ադամայ սկզբնական մեղացը համար այն բանտին մէջը արգելված էին՝ քո՛ չարչարանքովը և մահուամբը փրկեցան, և երկինքը ելան.

Ո՞րն է վեցերորդ աստիճանն, և ո՞վ բառն.

Վեցերորդ աստիճանն է այս. Յերրորդ աւուր յարուցեալ 'ի մեռելոց. Եւ այս բառ Բարթուղիմէոս առաքեալն.



Մեկ

Մեկնէ որ եմանոյ.

Ես կը հաւատամ, թէ յս՟ քս՟ երեք օրէն յետոյ՝ շաբաթ գիշերը որ կիրակի կը լուսնայր՝ իւր ա՟ծային զօրութե՟ն յարութի՟ առաւ անապական մարմնով։

Ո՞րն է եօթներորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ.

Եօթներորդ աստիճանն է այս. Համբարձաւ յերկինս, և նստաւ ընդաջմէ հօր. Եւ այս ըսաւ փիլիպպոս առաքեալն.

Մեկնէ որ եմանոյ.

Ես կը հաւատամ, թէ յս՟ քս՟ յետ քառասուն աւուր յարութե՟ն՝ իւր ա՟ծային կարողութե՟ն երկինքը համբարձաւ. և հօր ա՟յ աջ կողմը նստաւ, որոյ հետն հաւասար է փառօք և իշխանութե՟. և իւր հաւատացելոցը միշտ օգնութի՟ կընէ։

Ո՞րն է ութերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ.

Ութերորդ աստիճանն է այս. Գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս։ Եւ այս ըսաւ մատթէոս աւետարանիչն։

Մեկնէ որ եմանոյ.

Ես կը հաւատամ, թէ յս՟ քս՟ աշխարքիս



վեր

վերջը դատաստան պիտի գայ անթիւ
հրեշտակներով. արդարները յաջ կողմը
պիտի կանգնեցընէ, և մեղաւորները
ձախ կողմը։ Արդարները արքայութին
կըտանի, որ յաւիտենական փառք ու
պատիւը հոգւով մարմնով վայելեն, և
մեղաւորները և անհաւատները դժոխքը
կուղարկէ, որ յաւիտենական պատիժ
և տանջանք կրեն։

Ո՞րն է իններորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Իններորդ աստիճանն է այս. Հաւատամ ՚ի հոգին սբ։ Զայս ըսաւ Յակոբոս Ալփեան։

Մեկնէ որ իմանամ։

Աս կըհաւատամ ՚ի հոգին սբ. որ հօր և որդւոյ էակից և համագոյ է։ Ու ինչպէս հայր և որդի անեղ և կատարեալ են, նոյնպէս և հոգին սբ ած անեղ և կատարեալ է. և մեք քանի որ յայս աշխարս եմք, իւր շնորքը մեզի կուտայ, որ փրկուեմք հասնիմք։

Ո՞րն է տասներորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Տասներորդ աստիճանն է այս. ՚Ի սբ



կա

հռովմէական եկեղեցւոյ · Եւ այս լսաւ սի-մոն կանանացին ։

Մեկնէ որ իմանամ ։

Ես կը հաւատամ ՚ի մէկ կաթողիկէ եկե-ղեցին · Լաքին իմացիր, որ կաթողիկէ եկեղեցին՝ չէ այս քարաշէն և փայտա-շէն եկեղեցին, որ կըսուի Նէ-Բաշան եկե-ղեցի · այլ ամ քրիստոնէից ժողովն է, որ կըսուի ժողովուրդ եկեղեցի · Որ ամենքն ՚ի միասին մէկ մարմին են մի գլխոյ · և այն գլուխն է տէրն մեր յս քս · և մէկ հաւատք, մէկ մկրտութի, և մէկ սրբա-րար շնորք ունին ամենքն · և միմեանց հետ հաղորդութի կընեն աղօթքով և բարի գործով · Նաև կաղօթեմք յա-րևագալի ժամուն՝ ասելով · յարևելից մինչև յարևմուտս ընդ ամ տեղիս իշխանութեան, ուր և կարդան զանուն քո սուրբ · Տր աղօ-թիւք նց և բարեխօսութեն մեզ ողորմեա ։ Եւ այս ուղղափառ եկեղեցին ունի այս չորս արտաքին նշանս, մի, մի՝ մէկ՝ կա-թողիկէ և առաքելական ։ Ինչպէս կը քարոզէ եկեղեցին · Պաշտօնեայք զամենա-



կան

հայն ած. մի միայնոյ՝ սբ՝ կաթողիկէ՝ և
առաքելական եկեղեցւոյ:

Ո՞րն է տօնն և մէկ երրորդ աստիճանն. և ո՞վ
ըսաւ:

Տօնն և մէկ երրորդ աստիճանն է այս.
'ի Նողոսին Դեղայ: Նաև այս ըսաւ Թադէոս
առաքեալն:

Այսինքն որ իմանի:

Նաև կըհաւատամ՝ թէ այս սբ եկե-
ղեցւոյ մէջ մեղաց թողութիւն կըլլայ.
ղերէ ով որ իւր մեղքը զղջայ, խոստո-
վանի, և ապաշխարէ, և քի սբ մարմնոյ
և արեանն հաղորդի, հարկաւ թողուն
կըգըտնայ. Նաև այս իշխանութիւնը ած
տուաւ քահանայից, որ զղջացող մեղա-
ւորին արձակում և թողութիւն տան:

Ո՞րն է տօնն երկու երրորդ աստիճանն, և ո՞վ
ըսաւ:

Տօնն երկու երրորդ աստիճանն է այս.
'ի չարչարուն մարմնոյ, 'ի տապանին յարութենէն:
Նաև այս ըսաւ Մատթէոս առաքեալն:

Այսինքն որ իմանի:

Նաև կըհաւատամ, թէ դատաստանին



օրն՝

օրն՝ մեռեալներն իւրեանց մարմնովն յարութիւն կառնեն . բարի քրիստոնեայները յարքայութիւն կերթան , և անհաւատները և չար քրիստոնեաները դժոխքը :

## Գլ. Գ.

Ո՞վ ստեղծ զքեզ, և մէջ ինչ պարտաւոր ես:

Ած ստեղծ զիս . որ քանի կենդանի եմ, իւր ծառայութիւն ընեմ, իւր պաշտօն մատուցանեմ . և երբ որ մեռանիմ , արքայութեան փառացը հասնիմ:

Ի՞նչով կըլլայ այ ծառայութիւն ընել:

Այս երկու բանով կըլլայ . մէկմը՝ որ այ վախը և երկիւղը սրտերնուս մէջը միշտ կունենանք . և մէկալ՝ այ պատուիրանքը սիրով և զգուշութեամբ կըպահենք .

Ի՞նչով կըլլայ աստուածպաշտութիւն ընել:

Այս երեք բանով կըլլայ . նախ՝ ներքին մտօք և հոգւով այ մեծութիւնը կըհաւատամք: Երկրորդ՝ արտաքին կերպով ահիւ և դողութեամբ այ ծունր կըդընեմք , երկրպագութիւն կընեմք .



Եր

Չորրորդ՝ մեք պատարագ կը տեսանամք, որ աղօթք և աղաչանք կը մատուցանեմք.

## Աղօթքն ինչ է.

Աղօթքն է, որ միտքըդ առ Աստուած կը վերցունես, քեզի ըրած բարերարութեան համար շնորհակալ կը լլաս, և արժանաւոր բան մի կը խնդրես. Նաև այս երկու կերպ է. մէկն միայն սրտիւ և մտօք, և կըսուի մտաւորական աղօթք. Նաև մէկը՝ բերանով և ձայնիւ, և կըսուի յայտնաւոր աղօթք.

## Ինչու համար աղօթքներս երբեմն ընդունելի չեն լլար.

Երեք պատճառ ունի. մէկն այն է, որ հաստատուն հաւատով և յուսով չենք խնդրեր, այլ երկմտութեամբ և թերահաւատութեամբ, որ՝ չէ պիտանի. Երկրորդ՝ անպէտ և անարժան բան կը խնդրեմք. ինչպէս՝ գեղեցիկ տուն. չափէն աւելի ստակ և ապրանք, և այլն. Ուստի կըսէ յակոբոս առաքեալն. Խնդրէք և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք. Երրորդ՝ մեր խստասրտութեան համար է.

զերէ մենք երբ որ անգութ և քարա-
սիրտ կը լլանք, մեզի աղաչողին ձայնին
չենք լսեր, ա͞ծ մեր ձայնը ինչպէս
պիտի լսէ։ Ուստի եթէ մենք անյիշա-
չար ըլլանք, մեր ընկերին յանցանքը
ներենք, ա͞ծ ալ մեր յանցանքը կը ներէ։
այս է որ կըսենք տէրունական աղօթ-
քին մէջը. Թող մեզ զպարտիս մեր, որպէս և
մեք թողումք մերոց պարտապանաց։

Ըսա՛ տէրունական աղօթքն, որ լսեմ։

Հայր մեր որ յերկինս, ս͞բ եղիցի անուն
քո. եկեսցէ արքայու͞թ քո. եղիցին կամք
քո ո͞պ յերկինս և յերկրի. զհաց մեր
հանապազորդ՝ տուր մեզ այսօր. և թող
մեզ զպարտիս մեր՝ ո͞պ և մեք թողումք
մերոց պարտապանաց. և մի՛ տանիր
զմեզ ՚ի փորձութ͞ի. այլ փրկեա՛ զմեզ ՚ի
չարէ. զի քո է արքայու͞թ և զօրու͞թ, և
փառք յաւիտեանս, ամէն։

Ինչո՞ւ տէրունական աղօթք կըսուի։

Զերէ ք͞ս տէրը սորվեցուց մեզի այս
աղօթքը. և ամէն աղօթքներէն աւելի
մեծ և զօրաւոր է. անոր համար ամէն



քրիս

քրիստոնէի պէտք է բերան գիտնալ և լսել, և իւր զաւակացը սորվեցընել:

Պաքն ի՞նչ է:

Պաքն է, որ մարդ իւր անձը կը նեղէ, և զինքը կարգիլէ՝ փափուկ, պարարտ, և գիրցընող կերակուրներէն, այն օրերը՝ որ ս. եկեղեցին սահմաներէ:

Մի՛թէ ուրիշ պաք չկա՞յ մի:

Այո՛ կայ ուրիշ հարկաւոր պաք մի, որ կըսվի. ներքին պաք. և այս է, որ մարդըս կը պահէ իւր սիրտը և միտքը չար մտածմունքէն. բերանը՝ հայհոյութենէ և սուտ խօսելէն. աչքը՝ գէշ նայելէն. ականջը՝ առասպել խօսք և բամբասանք լսելէն. ձեռքը՝ չար գործելէն:

Ողորմութիւն ի՞նչ է:

Ողորմութիւնը այն է. որ կարօտեալ և խղճալի մարդոյ օգնութիւն կընեմք, և նեղութենէն կազատեմք:

Ողորմութիւնը քանի՞ կերպ է:

Երկու կերպ. մէկը մարմնաւոր, և մէկը հոգևոր:



Որոնք

## Որո՞նք են մարմնաւոր ողորմութիւնք։

Այս եօթն են. կերակրել զքաղցեալս. արբուցանել զծարաւեալս. զգեցուցանել զմերկս. ժողովել զօտարս և զղարիպս. 'ի տես գնալ հիւանդաց. երթալ մխիթարել զբանտարգեալս. թաղել զանտեր մեռեալս։

## Որո՞նք են հոգևոր ողորմութիւնք։

Այս եօթն են. բարի խորհուրդ տալ երկմիտ մարդուն. խրատել և սորվեցընել տգետը. յանդիմանել և չեխել մեղքէն ետ չի դարձօղը. ցաւակից ըլլալ և մխիթարել տրտումը. ներել ընկերին յանցանքը և սուչը. համբերել նեղութին, և դժգոհանք չընել. աղօթք ընել հաւասար կենդանեաց և մեռելոց համար։

---

## Գլ. Գ.

Ա՟յ օրէնքը կամ պատուիրանքը քանի՞ է։

Ա՟յ պատուիրանքը տասն է. և մովսէս մարգարէին ձեռօքը տուաւ ա՟ծ սինա լեռը, երկու քարեղէն տախտակի վերայ գրած։

Ո՞րն է առաջին պատուէրը, և անկէց ինչ պէ-
տք սորվինք։

Առաջինն է այս․ Ես եմ Տէր Աստուած քո․ Չ՛ եղիցին քեզ աստուածք բաց յինէն։ Եւ այս հրամանս մեզ կը պատուիրէ, մի միայն երկնի և երկրի և ամենայն եղելոց արարիչ Աստուծը հաւատալ, և ուրիշը չի պաշտել։

Ո՞րն է երկրորդ պատուէրը, և անկէց ինչ պէ-
տք սորվինք։

Երկրորդն այս է․ Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան․ Մի՛ երկիրպագանիցես նոցա․ և մի՛ պաշտեսցես զնոսա։ Եւ այս հրամանս կը պատուիրէ, ոսկիէ, արծաթէ, քարէ փայտէ, և կամ այլ ինչ նիւթէ կուռք չի շինել, և անոր երկրպագութիւն չընել։ Ուստի ագահ մարդը, որ ոսկին ու արծաթը չափէն աւելի կը սիրէ ու պատուէ, կռապաշտ կը սեպուի․ անոր համար պօղոս առաքեալը կը գրէ․ 'Ի բաց ընկէցէք զագահութիւն, որ է կռապաշտութիւն։

Մէյ անհաւատը թէ որ հարցընէ, հապա ինչո՞ւ պատկերը կը շինէք, և անոր երկրպագութիւն կընէք։

Անոր ըսէ թէ, մենք պատկերքը Աստ-

է չենք լսեր · քաւ լեզի · այլ պատ-
կերքը տեսնալով, անոր տէրը միտք կը
բերենք · Եթէ մեզ պատկերք է, խո-
նարհութն և պատիւ կընեմք · և այն
մեր մեղի բարեխօս կը բռնեմք ·

Իսկ եթէ տէրունական և Աստուածային
պատկեր է, ծնրադրութն և երկրպա-
գութն կընեմք · և այս մեր ըրած խո-
նարհութիւնը և երկրպագութիւնը՝ պատ-
կերքին տէրոջը կը վերաբերի · անոր
համար ձեռագործ պաշտօղ չենք, այլ
ճշմարիտ Աստուածապաշտենք ·

Ո՞րն է երրորդ պատուէրը, և անկից ինչ պէտք
սորվինք ·

Երրորդ պատուէրն է · Մի՛ առնու-
ցուս զանուն Տն Այ քո ի վերայ սնոտեաց ·
Եւ այս հրամանս մեզ կը պատուիրէ,
Այ երկրպագելի անունը՝ դատարկ տե-
ղեր չի յիշենք · կամ սուտ բանի համար
վկայ չի բերենք · Զի եթէ ունայն և
ոչինչ խօսքի համար՝ Այ ահեղ անունը
յիշելը՝ սուտ երդում ընել է ·

Նաև, այն քրիստոնեայն որ անուանով
միայն քրիստոնեայ է, և մկրտութն շը-



նորք ,

նորք, և քրիստոնէի գործք չունի, որ անունը 'ի վրն սնոտեաց առնօղ է:

Ո՞րն է չորրորդ պատուէրը, և ինչպէս ինչ պէտք պահենք:

Չորրորդն է. Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա: Նաև այս պատուէրը մեզի կը սորվեցընէ, վեց օր մարմնաւոր գործ ընել, և մէկ օր հանգչիլ, և որ փառաբանութե և աղօթից և հոգևոր գործոց պարապիլ:

Ո՞ր շաբաթ օրը պատուիրեց հանգչել, ինչո՞ւ առաքեալները կիրակի օրը սահմանեցին.

Պատճառն այս է. զերէ քս որն մեր կիրակի օրը յարութի առաւ, և մեզի սոյնին ծառայութենն ազատեց. և 'ի պատիւ քնի յարութենը սահմանեցին որ առաքեալները՝ կիրակի օրը ծառայական գործքէ ազատ կենալ:

Ո՞րն է հինգերորդ պատուէրը, և ինչպէս ինչ պէտք պահենք.

Հինգերորդն է. Պատուեա՛ զհայր քո և զմայր քո. զի քեզ բարի լինիցի. և երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրին բարութե: Նաև այս պատուէրս մեզի կը սորվեցը-նէ,

նէ , թէ ծնողքդ պատուէ խոնարհութ̃
և պատկառանքով . անոնց հարկաւոր
պէտքը քո կարողութ̃դ չափ հոգայ , և
մի՛ տրտմեցըներ . որ ա̃ծ քեզի բարի
ընէ , և շատ ապրիս ։

Այս պատուէրէն ալ ինչ կիմացուի ։

Հայր ըսելով՝ կիմացուի ա̃մ երախտիք
և բարութ̃ ընողները . ինչպէս՝ թագա-
ւորը , իշխանը , վարդապետը , վարժա-
պետը . և անոնք ամենայն՝ որ հօր պէս
գութ և խնամք ունին մեր վրայ , և
մեր աղեկութ̃ը պատճառ կըլլան ։

Ո՞րն է հինգերորդ պատուէրը , և անկէց ինչ
պէտք սորվինք ։

Վեցերորդն է . Մի՛ սպաններ ։ Ու այս
հրամանս կարգիլէ՝ առանց իրաւանց
մարդ ըսպաննելը . ինչպէս՝ որ դատա-
ւոր չէ , իշխանութ̃ի չունի , և մարդ
կըսպաննանէ . և կամ թէ իշխանութ̃ի
ունի , և դատարկ տեղն կըսպաննանէ ։
Ու չինքի մարդասպանութ̃ն շատ ան-
գամ յառաջ կուգայ բարկութ̃ն . անոր
համար քս̃ տր̃ն մեր հրամայեց , թէ
մի՛ բարկանայք . և ըսաւ՝ թէ ո՛վ որ իր

ասացէ եղբօր իւրում [illegible], պարտա-
ւոր լինի գեհենոյն։

Ո՞րչափ կերպ է մարդասպանութին։

Երկու կերպ է. մէկը մարմնաւոր է, որ մարդոյ մարմինը և հոգին մէկ ըղ մէկէ կը բաժանէ. և մէկալը հոգևոր է, որ իւր հաւատակից եղբայրը և ընկերը կատէ. ասոր համար կըսէ յովհաննէս աւետարանիչը. Թէ որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է։

Ո՞րն է եօթներորդ պատուէրը, և ինչպէս ենք պէտք պահենք։

Եօթներորդն է. Մի՛ շնար։ Եւ այս հրամանս մեզ կարգիլէ ամէն չար գործքէ. որով կը խրատիմք, պարկեշտ և մեք պահել մեր հոգին և մարմինն։

Ո՞րն է ութերորդ պատուէրը, և ինչպէս ենք պէտք պահենք։

Ութերորդն է. Մի՛ գողանար։ Եւ այս հրամանս մեզ կարգիլէ այն ամէն բանէն որ օտարին է՝ չը գողանալ, և չը յափշտակել. ոչ ծածուկ, և ոչ յայտնի։

Ո՞րչափ կերպ գողութիւն կայ։ Դ.

Նախ գողութին կը սեպուի. բանւորին



վարձ

վարձքը օրէ օր ձգել. կամ եղէլ պակաս չափ գործ ածել. կամ լաւը ցըցընել, և գէշը տալ: Ու գիտցիր, որ այլ մեղքերը ապաշխարանքով կը ջնջըվին, այլ գողութին 'ի տէրն պիտի դառնայ:

Ո՞րն է իններորդ պատուէրը, և անիկայ ինչ պիտի սորվինք.

Իններորդն է. Մ' սուտ վկայեր ընկերէ քունդ: Ու այս հրամանս մեզի կարգիլէ այն ամէն բանէն, որուն աղէկ տեղեակ չենք, վկայութի չի տանք:

Որոնք կերպ սուտ վկայութեան են. Դ.

Այո՛ սուտ վկայ են բանբասողները՝ որ ընկերին բարի անունը կապականեն: Սուտ վկայ են բանսարկութի ընողները, որ տարաձայնութիւն և կռիւ կը ձգեն՝ տան և ընտանեաց մէջ, բարեկամի մէջ, ընկերի մէջ, և այլն: Սուտ վկայ է մարդահաճոյն, այսինքն, Երեսէ խօսողն. որ աչքէ չելլալու համար, սուտ խօսքերուն՝ այո՛ այդպէս է կըսէ: Դաւիթ մարգարէն զայսպիսի մարդն կանիծէ ասելով. Եծ ցրուեսցէ շրթունս ամբարտաւանութեան: Ասոր ամէն սուտ խօ-



սող

ստողները՝ որդի սատանայի կը կոչէ Տէրն մեր, զերբ կըսէ. որ սուտ խօսի, յիւրոց անտի խօսի. զի սուտ է և հայր նր ստախօսոյ. և կը պատուիրէ, ըսէ եղիցի բան ձեր, այո՛ն՝ այո. և ոչն՝ ոչ:

Որն է տասներորդ պատուէրը, և անկէց ինչ պէտք սորվինք:

Տասներորդն է. մի՛ ցանկանար տան ընկերի քո, և մի՛ անդոյ նր. մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, և մի՛ ծառայից նր. և մի՛ ամ. ինչ ընկերի քո իցէ: Եւ այս հրամանաւս կարգիլէ Ած մեր սիրտը՝ ամէն կերպ չար ցանկութէն. և բաւական պիտի համարինք այն, որ ինչ Ած մեզի տուեր է, թէ տուն, և թէ այլ ինչ ստացուածք: Զ երբ ցանկութիւնը՝ մեղք կը ծնանի. և մեղքը՝ մահ և դատապարտութիւն կը բերէ: Եւ որովհետև սրտին դուռը՝ մարդուս աչքն է. պէտք է որ աչքերնիս զգուշութեամբ պահպանեմք. որ ցանկութիւնը գողի նման սրտերնիս չի մտնայ, և մեր հոգին չըսպաննանէ:

Որն է ամէն պատուիրանաց վախճանը:

Ամէն օրինաց և պատուիրանաց կա-



տա

տարումը սէրն է․ ինչպէս պօղոս առա-
քեալը կը գրէ, եթէ լրումն օրինաց սէր
է, 'ի սմա սորա է, և 'ի նմա բարեաց, և յան-
ջելձաւոր հաւատոց ։

Առաջին մեծ պատուիրանք ։

Նախ և առաջ պարտաւոր եմք զած սի-
րել․ որ մեզի ստեղծեր է, և կը խնամէ։
Նա հայր ած զորդին միածին աշ-
խարհք խրկեց մեզի փրկելու համար․
Որդին միածին եկաւ, մարմին առաւ,
մեզի փրկեց․ Հոգին սբ իւր շնորքը
մեզ կու տայ, որ ճշմարտութիւնը ճանա-
չեմք, և բարին կամենամք․

Երկրորդ՝ մեծ պատուիրանք ։

Երկրորդ՝ մեր անձը պիտի սիրեմք․
մեղքէն հեռի պահեմք․ բարի գոր-
ծեմք․ որ ածային ողորմութիւնը և ար-
քայութիւնը հասնիմք ։

Երրորդ՝ մեծ պատուիրանք ։

Երրորդ՝ մեր ընկերը պիտի սիրեմք՝ մեր
անձին նման․ զերէ մեկ աւազանէ ծնել
եղբայր եմք․ մեկ հաւատք, մեկ մկրտութի
ունիմք․ և մեկ արքայութի պիտի երթամք։
Նա սբ առաքեալը կըսէ թէ, ով որ իւր
եղբայրը կատէ, մարդասպան է ․

## ԳԼ. Ե.

### Մեր եկեղեցւոյ խորհուրդը ինչ է։

Եկեղեցւոյ խորհուրդը՝ այն անտեսանելի շնորհացը արտաքին և զգալի նշան մի է, որ անով Աստուածային շնորքը մեզի կը տրվի։

### Քանի՞ է։

Եօթն է, այսինքն՝ մկրտութիւն, դրոշմ, հաղորդութիւն, ապաշխարութիւն, վերջին օծում, կարգ, պսակ։

### Մկրտութիւնն ինչ է։

Մկրտութիւնն՝ վերըստին և հոգևոր ծնունդ մի է. որ սուրբ աւազանին մէջը մեր մարմինը կը լուացվի ջրով՝ յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ. և մեր հոգին կը մաքրվի ադամայ սկզբնական մեղքէն։

### Դրոշմն ինչ է։

Դրոշմն է օծումն սրբալոյս մեռոնին, որ օծեալ և կնքեալ կըլլայ մկրտեալն. և այս անջնջելի նշանովը Քրիստոսի զօրապետին յատուկ զինուոր կը լինի։

### Քանի՞ տեղ օծում կըլլայ Մկրտեալ տղային։

Ինը տեղ, այսինքն. ճակատը, աչքը,

ական

ականջը, հոտոտելիքը, բերանը, ափը,
սիրտը, քամակը, ոտքը։

Այս օծումը ինն կնիքը՝ ինչ զօրութիւն ունին։

Ճակատին կնիքը՝ համարձակութիւն կու-
տայ քեզի որ հաւատքը աներկիւղ դա-
ւանիլ։ Աչքին կնիքը՝ հոգւոյ աչքը
կը լուսաւորէ, որ միշտ արթուն և
պատրաստ մնայ։ Ականջաց կնիքը՝ հոգ-
ւոյ ականջը կը բանայ, որ աստուածային պատ-
ուիրանքը լսէ։ Հոտոտելեաց կնիքը՝
յաւիտենական կենաց անմահական հո-
տովը, հոգին կը զմայլեցընէ։ Բերանին
կընիքը՝ պահապան կըլլայ բերնին, որ
չար չի խօսի։ Ափին կընիքը՝ զօրութիւն և
ոյժ կուտայ ձեռքերին, որ բարի գործէ։
Սրտին կընիքը՝ հոգին կը սրբէ, կը նորո-
գէ, և կը հաստատէ, որ միշտ բարի խորհի։
Քամակին կնիքը՝ վահան՝ այսինքն ղալ-
խան կըլլայ կռնակը, որ սատանային նետը
չի խոցէ։ Ոտից կնիքը՝ ոտքերը կուղ-
ղէ, որ արքայութեան ճանապարհը երթայ։
Այս կնիքներըս մէյմէկ ահաւոր զէն
կըլլան մկրտեալ տղային, որ անոնցմով
կը պատերազմի սատանայի՝ և մարմնոյ՝ և

աշխարհի դէմ, և կը յաղթէ . և քս̄ թա-
գաւորէն անթառամ պսակ կառնու ։

## Հաղորդութի̄ն ինչ է ։

Հաղորդութի̄ն՝ քի̄ սբ̄ մարմնոյ և արեան խորհուրդն է, որ արտաքին տեսութ̄ հաց և գինի կերևնայ, այլ իսկապէս քս̄ է . և մեք անոր ճաշակմամբը՝ կեանք և կենդանութի̄ կըստանամք ։ Նաև՝ քի̄ սէրը մտքերնիս կը բերեմք և կը յի-շեմք, թէ մեզի այնքան սիրեց, մինչև որ իւր մարմինը և արիւնը մեզի հոգևոր կերակուր և ըմպելի տուաւ . որով մեր հոգին կենդանի կըլլայ ։

Ես կը հաւատամ, թէ սրբագործեալ նշխարին իսկապէս քս̄ է . Բայց այս կուզեմ սորվիլ, երբ որ քահանայն մէկ նշխարը մասն մասն կը բաժա-նէ, ինչպէս ամբողջ կը մնայ մէկ քս̄ այն բա-ժանեալ մասանց մէջը . ասոր կը խնդրեմ ինձ մէկ օրինակ մը տալ որ խելքս հասնի ։

Քեզի օրինակ ահա արեգակը, որ մէկ հատ է աշխարհքիս մէջ, և մէկ կերևնայ ամբողջ հայելիին մէջը . և եթէ կտոր կտոր ընես այն հայելին , մի և նոյն արեգակն է , որ կերևնայ ամէն մէկ

կատր հայելին մէջը , և իւր ամբողջութիւնը չի կորսնցներ . այսպէս մէկ քս է ամբողջ նշխարքին մէջ , և բեկեալ մասանց մէջ :

Ապաշխարութիւն ինչ է :

Ապաշխարութիւն է , իւր գործեալ մեղքը լալ , և կամաւոր պատիժ կրել :

Քանի՞ բան պէտք է ապաշխարութեն :

Չորս բան . առաջինն է՝ զղջումն գործեալ մեղքին : Երկրորդն է՝ առաջադրութի կրկին անգամ չի գործելոյ : Երրորդն է՝ ճշմարիտ խոստովանութի առաջի քահանային : Չորրորդն է՝ կատարեալ վճարումն դրած ապաշխարանքին : Եւ այս սբ խորհուրդը՝ քահանային արձակումն առլովը կը ջնջէ բոլոր ներգործական մեղքերը , եթէ մահացու , և եթէ ներելին :

Վերջին օծումն ինչ է :

Վերջին օծումն՝ հոգւոյ և մարմնոյ առողջարար դեղ մի է , որ քահանայական աղօթքին զօրութեն ծանր հիւանդները կը բժշկէ , և անոնց ներելի մեղքը կը քաւէ :

Հայոց մէջ եկեղեցւոյն վերջին օծման խորհուրդը կը կատարէ՞ք։

Այո՛ ծանր հիւանդներուն վրայ քանի անգամ հարկաւոր ըլլայ՝ կը կատարէ. և այս մէջ խորհուրդն է՝ որ կ'ըսուի կանթե-ղաւ. ուր քահանայքն կը կարդան սաղմոս, գիրք, բժշկութեան աւետարան. աղօթք. և յետոյ փարատեցո՛ զցաւս կ'ըսեն։

Միթէ՞ օրհնեալ իւղով հիւանդը օծել հարկաւոր է։

Իւղով օծել՝ ազգային ծէս, և խորհրդական արարողութիւն մի է, և հաւատոյ մաս չէ, անոր համար իւղոյ գործածութիւն հարկաւոր չէ. զերէ սանկ ծիսական արարողութիւններ ամէն քրիստոնեայ ազգի մէջ՝ կ'ըլլայ որ կը փոփոխվի, և կ'ըլլայ որ կը խափանվի։ Իսկ բուն զօրութիւնը այս խորհրդոյս է քահանայական աղօթքը և ընթերցուածքը. և այն է հաւատոյ մասը և հարկաւորը, և այս ամենևին չի խափանիր. ինչպէս կը գրէ մեծն խոսրով ժամագրքի մեկնութեան մէջը, 281 երեսը։ Նաև կ'ըսէ յակոբոս առաքեալն, թէ աղօթքն հաւատոյն փրկեսցէ զաշխատեալն։

### Քահանայութեան կարգն ինչ է.

Քահանայութեան կարգը հոգևոր իշխանութիւն մի է, որ 'ի հոգւոյն սրբոյ կառնու ձեռնադրեալն. և իշխանութիւն կունենայ պատարագ մատուցանել, անդարձ մեղաւորը կապել, և զղջացող մեղաւորին արձակում և թողութիւն տալ:

### Պսակն ինչ է.

Պսակն՝ եկեղեցւոյ սուրբ խորհուրդ մի է, որ այրը և կինը սուրբ սիրով և հաւատարմութեամբ կը կապակցէ միմեանց հետ. որ զաւակ ծնանին, և Քրիստոսի եկեղեցին աճեցուցանեն:

---

## Գլ. Ը.

### Բարոյական առաքինութիւնք քանի՞ են:

Չորս են. դ՝ խոհեմութիւն, արիութիւն, արդարութիւն, և բարեխառնութիւն:

### Խոհեմութիւն ինչ է.

Խոհեմութիւնն է, որ անով չարը՝ բարին կը ճանաչեմք, և մեկ ըղ մեկէ կը զատեմք. և ամէն ընելու բաներնիս՝ ըստ արժանւոյն կը տնօրինենք:

Արիութիւն ինչէ։

Արիութիւնն է, որ անով ամէն դժուարութեան, և աշխարքի փորձութեան համբերութեամբ կը յաղթեմք՝ ոչ յաջողութեան ժամանակը կը հպարտանամք, և ոչ ձախորդութեան ժամանակը կը տրտմիմք։

Արդարութիւն ինչէ։

Արդարութիւնն է, որ անով ամէն մարդոյ արժանի և վայելուչ եղածը կընեմք. թէ պատուել պէտք է՝ կը պատուեմք. թէ վախնալ արժան է՝ կը վախնամք, թէ ողորմելու կարօտ է՝ ողորմութիւն կուտամք։ Նաև այս արդարութիւն է, որ մեզնէ մեծին պատիւ ընեմք. մեր հաւասարին հետ սիրով կենցաղավարիմք. մեզնէ պզտիկին խնամք և գթութիւն ընեմք։

Բարեխառնութիւն ինչէ։

Բարեխառնութիւնը՝ ամէն անկարգ ցանկութեան սանձ և իւլարն է. որ անով չար ցանկութիւնը կը խափանի։

Այս բոլոր առաքինութիւններէն ամէն աղէկն՝ և ամէն յարգոն հաւատքն է. քրիստոնէից յատուկ եղած առաքինութիւն ալ նոյն է։

Այն՝ կայ, որ քո Տէրը ինչքն ըրաւ, և



մեզ

մեզ սորվեցուց . և է այս չորսը . խոնարհուն , սէր , համբերուն , և ներողուն .

## Գլ. Լ.

Ո՞րն է առաքինութին կայ, որ անոնք գործելով երանութեան արժանի կը լլայ մարդս այս աշխարհքիս մէջ, և վերջապէս երանութեն կը հասնայ արքայութեան մէջ.

Ութը կերպ առաքինութն կայ, որ կըսվին ութ երանութիւնք.

Ո՞րն է առաջին երանութին.

Առաջինն է, հոգւով աղքատ ըլլալ. զի մարդս իւր ունեցած մարմնաւոր ստացուածքը բանի տեղ չի սեպել. և անով չի հպարտանալ. և չունենալուն համար չի տրտմիլ.

Ի՞նչ է երկրորդ երանութը.

Երկրորդն է, հեզ ըլլալ. զի եթէ մէկը իւրեան թշնամուն ընէ, անոր դէմ չի բարկանալ, քէն չի պահել. և թշնամուն չընել. այլ փոխարէնը բարի ընել.

Ի՞նչ է երրորդ երանութը.

Երրորդն է, սգաւոր ըլլալ. զի իւր մեղքը լալ և սգալ. և այսպէս լալով իւր կորուսեալ հոգին գտնալ.

Ինչ է չորրորդ երանութիւնը։

Չորրորդն է, քաղցեալ և ծարաւի ըլլալ արդարութեան. ք՟՝ ինչպէս անօթի մարդը հացին, և ծարաւ մարդը ջրոյն կը փափագի. այնպէս փափագիլ արդարութեան։

Ինչ է հինգերորդ երանութիւնը։

Հինգերորդն է՝ ողորմած ըլլալ. ք՟՝ թէ հոգևոր և թէ մարմնաւոր ողորմութեան՝ կարօտեալ և խղճալի մարդոյն ողորմիլ։

Ինչ է վեցերորդ երանութիւնը։

Վեցերորդն է, սիրտ ս՟բ ունենալ. ք՟՝ սիրտը մաքուր հայելիի պէս պահել, որ զա՟ծ տեսնալու արժանի ըլլայ։

Ինչ է եօթներորդ երանութիւնը։

Եօթներորդն է, խաղաղարար ըլլալ. ք՟՝ մէկ ըզ մէկու մէջ եղեալ թշնամութիւնը և ատելութիւնը վերցունելու ջանք ընել, և խաղաղութիւն հաստատել. և այսպիսի մարդն՝ որդի ա՟յ կը կոչուի. զերէ նման կըլլայ որդւոյն ա՟յ, որ մեր և ա՟յ մէջ եղեալ թշնամութիւնը՝ իւր խաչելութեամբն վերցուց, և խաղաղութիւն ըրաւ։


Ութ

Աստի ով որ խռովութիւն կը սերմանէ՝ որդին սատանային է ։ և քանի խաղը և մահը անպատճառ կընէ ։

Ի՞նչ է ութերորդ երանութիւնը ։

Ութերորդն է, արդարութեան համար հալածում կրել ։ Ք՛ս ամէն կերպ նեղութեան համբերել, թէ հաւատոյ, թէ ճշմարտութեան համար ։ Ահա Ք՛ս որը՝ ճշմարտութեան համար աշխարք եկաւ արիւն թափեց ։ ինչպէս իւր ս՟բ բերանովը կը վկայէ, թէ յայն իսկ եկեալ եմ, որ վկայեցից ճշմարտութեան ։

---

## Գլ. Ը.

Մեղքն քանի՞ կերպ է ։

Երկու կերպ է ։ սկզբնական և ներգործական ։

Ո՞րն է սկզբնականն ։

Սկզբնական մեղքն է, որ ադամ նախահայրէն սերեալ ունինք ամէնքս ։ Զայս կը ջնջէ ս՟բ մկրտութիւնը ։

Ո՞րն է ներգործականն ։

Ներգործական մեղքն է, որ յետոյ



մեր

մեր կամքը չար կը գործեմք ։ Այս այս
կը ջնջուին զղջմամբ, խոստովանութ͞ե,
և ապաշխարութ͞ե ։

Ներգործական Մեղքը քանի՞ կերպ է ։

Երկու . ներելի և մահացու ։

Ներելի Մեղքն ի՞նչ է ։

Ներելին է այն՝ որ ըստ ինքեան թե-
թև մեղք է . կամ որ տկարութ͞ե կամ
չգիտութ͞ե չար կը գործեմք և ա͞յ սէրը
սրտերնուս մէջը ունիմք ։

Մահացու Մեղքն ի՞նչ է ։

Մահացուն այն է՝ որ ըստ ինքեան մեծ
մեղք է, կամ որ յօժար կամօք և գի-
տութ͞ե չար կը գործեմք, և ա͞յ սէրը
սրտէ կը հանեմք ։

Գլխաւոր մահացու Մեղքերը քանի՞ են ։

Եօթն են . ա͞յ՝ հպարտութիւն, նախանձ,
բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրա-
մոլութիւն, և բղջախոհութիւն ։

Ո՞րն է Մեղք զանցառութ͞ե, և ո՞րն է Մեղք առ-
նելութ͞ե ։

Զայս գիտցիր, որ ա͞յ պատուիրանաց
ամէն յանձնառական է, որ կը պատուիրէ
թէ

թէ ըրէ , ինչպէս՝ պատուեա՛ զհայր քո զմայր ։ Եւ ոմն հրաժարական է , որ կարգիլէ թէ մի՛ ըներ · ինչպէս՝ մի՛ սպանանէր , մի՛ գողնար ։ Ահա եթէ յանձնառականը զանց առնեմք չի կատարեմք , կըլլի մեղք զանցառութեան ։ Եւ եթէ հրաժարականէն հեռու չի կենամք և Աստուծոյ հրամանին դէմ գործեմք , կըլլի մեղք անօրէնութեան ։

Քանի՞ հարկաւոր բան կայ մարդերուն պահելու , որ մեղքէ հեռու մնան ։

Այս չորս բանն է · մահն · դատաստանն · դժոխքն · և արքայութիւն ։

## ՄԱՀԸ ։

# ԹԱՄԿԱԿԱՆ

# ՍՃԻԻ



Ի ՊԷՏՍ

ՄԱՆԿԱՆՑ

24568 (8 [illegible])